ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարան,
պատմության ֆակուլտետի դեկան
ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Էլ. փոստ.՝ eminasyan@ysu.am
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 1988–1990 ԹԹ.

Ներածություն

Ուղիղ 32 տարի առաջ արցախահայությունը, հավատալով Գորբաչովի հայտարարած վերակառուցման քաղաքականությանը, պայքար սկսեց սահմանադրական ճանապարհով իր մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար: Սակայն ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, չցանկանալով լուծում տալ այդ հիմնախնդրին, Արցախում և Հայաստանում ընթացող բազմամարդ հանրահավաքները որակեց սադրիչ, ծայրահեղական գործողություններ, մի խումբ ազգայնականների պահանջ:

Պատեհ առիթ էր ստեղծվել Ադրբեջանի համար վերակենդանացնելու պանթուրքիզմի դոկտրինան և գործնականում իրականացնելու այն: Նորից որերորդ անգամ այդ քաղաքականության ճանապարհին խոչընդոտ էր դիտվում բովանդակ հայությունը: Այն վերացնելու համար թուրք հանցագործները կազմակերպում են հայերի ցեղասպանությունը: Մարդկության դեմ այդ հանցագործությունը նոր իրավիճակում փորձարկելու նպատակներից մեկն այն էր, թե ինչպիսի արձագանք կգտնի այն Խորհրդային միությունում և աշխարհում:

Դրա արդյունքը եղան Ադրբեջանի շուրջ 400 հազար հայերի բռնի տեղահանումը, ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի հասարակության դեմ լայնածավալ ռազմական ագրեսիան, որը հանգեցրեց ծանր մարդկային և նյութական կորուստների: Այն փաստը, որ Ադրբեջանն իր պատասխանատվությունն ու մեղքը կատարված հանցագործությունների և սանձազերծված ագրեսիայի հետևանքների

համար ընդունելու փոխարեն շարունակում է հակահայկական տենդագին գործունեությունը, ուժի դիրքից սպառնալիքները, վկայում է, որ Բաքուն առ այսօր շարունակում է վտանգ ներկայացնել ոչ միայն իր իսկ բնակչության, այլև ողջ տարածաշրջանի համար: Դրա հիմնական պատճառն այն է, որ Բաքվի հրեշավոր ոճրագործությանը առայժմ ոչ քաղաքական, ոչ իրավական, ոչ բարոյական գնահատական չի տրվել[1]: Անգամ զղջումի որևէ նշույլի բացակայությունը, ավելին, հայ ժողովրդի հանդեպ աճող սպառնալիքները հաստատում են, որ «սումգայիթները», «կիրովաբադները», «բաքուները» դեռևս մնում են Ադրբեջանի պաշտոնական քաղաքականության օրակարգում: Եվ այս ամենը կատարվում է միջազգային հանրության աչքի առաջ, որի թողտվությամբ է հնարավոր դարձել արյունալի խրախճանքը, որը համակել էր Խորհրդային Ադրբեջանի ամբողջ տարածքը:

Սումգայիթյան ցեղասպանությունը

Այդ ընթացքում իրականացվող վերը նշված ցեղասպանությունները ոչ թե պատահականություններ էին, այլ պետական քաղաքականության և Ադրբեջանի ղեկավարության հանցավոր գործողության հետևանք: Այնինչ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա պատժի մասին» 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայով նախատեսվում է խստագույն պատասխանատվություն: Դեռ 1988թ. փետրվարի 26-ին՝ մինչև Սումգայիթյան ջարդերը, հայ գրողներ՝ Ս. Կապուտիկյանը և Զ. Բալայանը հայ ժողովրդի անունից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ.Գորբաչովի առջև բարձրացրին Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և անկախության իրավունքի հիմնախնդիրը: Այդ առթիվ նրա պատասխանը («Իսկ դուք մտածե՞լ եք Բաքվում ապրող 270 հազ. հայերի ճակատագրի մասին»)՝ վկայում է, որ նա լավատեղյակ էր հայերի դեմ կազմակերպվող ցեղասպանությանը[2]: Տեղյակ էր ու ոչ մի կանխարգելիչ միջոցների չդիմեց: Եվ պատահական չէ, որ մի երկու օր հետո հայերի կոտորածներ տեղի ունեցան Ադրբեջանում:

1988 թ. փետրվարի 27-29-ը Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից ոչ հեռու գտնվող արդյունաբերական Սումգայիթ քաղաքում իրականացվեց քաղաքի հայության ցեղասպանությունը: Զոհվեցին մի քանի տասնյակ հայեր, մոտ 200 մարդ վիրավորվեց: Այդ ջարդերից հետո քաղաքի 18 հազար հայ ազգաբնակչությունը ստիպված բռնեց գաղթի ճանապարհը: Պաշտոնական աղբյուրների վկայությամբ զոհերի թիվը կազմել է 32 մարդ, սակայն մինչև օրս ստույգ հնարավոր չէ պարզել խաժամուժ գազանի կրքին զոհ դարձած մարդկանց ճշգրիտ թիվը: Այնինչ իրականում դիարաններում այդ օրերին գրանցվել է 115 դիակ: Ըստ փաստական տվյալների՝ զոհվել է 100 մարդ[3]:

Սումգայիթյան փախստականների վկայությամբ հայերի կոտորածը եղել է լավ կազմակերպված: Դա է վկայում այն հանգամանքը որ խաժամուժը զինված է եղել քաղաքի գործարաններում վաղօրոք պատրաստված դանակներով, սրածայր մետաղաձողերով և տարբեր տեսակի սառը զենքերով: Նախօրոք մարդասպաննե-

---

[1] Аннексия и Депортация 1998, 10.
[2] Արարյան 1996, 55:
[3] Сумгаит … Геноцид …гласность?... 1990, 55.

ին տրվել են քաղաքում բնակվող հայերի հասցեները: Կոտորածի օրերին հայերի բնակարաններում անջատվել են հեռախոսները: Կոտորածին նախորդող ժամերին հանրահավաքում խոսել և երթը գլխավորել են քաղաքի կուսակցական կոմիտեի առաջին և երկրորդ քարտուղարները: Քաղաքի իրավապահ մարմինները երեք օր մատնված են եղել անգործության: Վերջին օրը քաղաք մտած զինվորների աչքի առջև կատարված բազմաթիվ սպանություններ չեն կանխվել նրանց կողմից:

Սումգայիթյան հանցագործության երկրորդ փուլը այդ կոտորածի հետքերի վերացումն էր, որը կատարվեց շատ արագ և ոչ առանց կենտրոնի օգնության: Միութենական պաշտոնական լրատվական միջոցները ջանք ու եռանդ չէին խնայում, որ տեղի ունեցածը ներկայացնեն մի խումբ խուլիգանների արարք: Հայերի ցեղասպանությանը Սումգայիթում նման որակում տվեց նաև երկրի քաղաքական ղեկավարությունը: Կատարվածին չտրվեց քաղաքական գնահատական: Իրականությունը թաքցվեց երկրի ժողովրդից:

Հաջորդ փուլը կապված էր սումգայիթյան ցեղասպանության դատավարության հետ: Որպեսզի չբացահայտվեն ցեղասպանության իրական կազմակերպիչները, և հաստատվի պաշտոնական վարկածը, դատավարությունը աղճատվեց:

Խորհրդային Միության մի քանի քաղաքներում տեղի ունեցան առանձին դատավարություններ, մեղադրվեցին ջարդերին մասնակցած մի քանի մարդ, իսկ իրական կազմակերպիչը՝ Ադրբեջանի ղեկավարությունը, մնաց անպատիժ:

Միայն 3 անձի վերաբերյալ գործը հանձնվեց ԽՍՀՄ գերագույն դատարան:

1988թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին դատավարության ընթացքում ապացուցվեց, որ ոճրագործ ոմն Ա. Ախմեդով, որը գլխավորում էր 41ա թաղամասի հայերի կոտորածը, փետրվարի 29-ին մի ձեռքին բռնել է կացին, իսկ մյուսում՝ բարձրախոս և անընդհատ կոչել է՝ բղավելով. «Մուսուլմաննե՛ր, ցո՛ւյց տվեք հայերի տները, որտե՞ղ են նրանք ապրում», «Մա՛հ հայերին»: Նրա դրդմամբ առանձնակի դաժանությամբ սպանվել է 7 հայ, քարուքանդ են արվել հայերի բազմաթիվ բնակարաններ, ոչնչացվել կամ յուրացվել է նրանց գույքը: Ընդհանուր նյութական վնասը հաշվարկվեց 216 հազար ռուբլի[1]: Վկաների ցուցմունքներով մերկացվեցին նրանց ոճրագործությունները: Թվում էր, թե հրապարակայնորեն կդատապարտվեին ոճրագործ ցեղասպանները, այնինչ 94 մեղադրյալների վերաբերյալ 30 քրեական գործերը մնացին անորոշ մշուշի մեջ և հռչակված հրապարակայնության ու ժողովրդավարության պայմաններում Մոսկվայում քննվեց ընդամենը 1 գործ: Զոհվածների հարազատների և փաստաբանների կողմից խնդիր դրվեց բոլոր գործերը միացնել, ուղարկել լրացուցիչ քննության՝ մերկացնելու համար ցեղասպանության կազմակերպիչներին, ղեկավարներին, հրահրողներին: Դատարանը միայն մեկին դատապարտեց մահվան, իսկ մնացած գործերի ճակատագիրն առ այսօր հայտնի չէ: Փաստորեն Ադրբեջանի Հանրապետության պետական, կուսակցական, ազգայնամոլ որևէ գործիչ՝ լինի նա Ալիևը, Իսկենդերովը, Կևորկովը, Սուլեյմանովը, Մամեդովը, Վեզիրովը թե Բունիաթովը, քրեական կարգով դատական պատասխանատվության չենթարկվեց: ՄԱԿ-ի դրույթները չեն

[1] Արաբյան 1996, 55:

կիրառվել ու չեն կիրառվում Ադրբեջանի ամբողջ տարածքում, այդ թվում՝ Բաքվում և այլուր հայ բնակչության նկատմամբ թույլ տված հանցավոր գործողությունների համար: Դրա պատճառով էլ ստեղծվել էր անպատժելիության ու սանձարձակության մթնոլորտ:

Այն, որ ցեղասպանության կազմակերպիչը Ադրբեջանի կուսակցական և պետական ղեկավարությունն էր, կասկածից վեր է: Դեռ մինչև ղարաբաղյան դեպքերի ծավալումը՝ 1988թ. փետրվարի 14-ին Ստեփանակերտում կայացած կոմկուսի մարզային բյուրոյի նիստում, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ Ռ. Ասադովը հայտարարեց, որ 100 հազար ադրբեջանցիներ ամեն րոպե պատրաստ են մտնել Ղարաբաղ և սպանդ սարքել[1]: Փետրվարի 20-ից հետո Ադրբեջանի հեռուստատեսությունը և ռադիոն աննախադեպ հակահայկական վայնասուն բարձրացրին, որին մասնակցում էին հանրապետության կուսակցական և պետական մի շարք գործիչներ:

Սումգայիթի հայության ցեղասպանությունը բռնեց իր քննությունը՝ անպատժելիության սինդրոմը նպաստեց հետագա դեպքերի զարգացմանը: Ադրբեջանի տարբեր վայրերում հայերը սկսեցին հարձակման ենթարկվել ադրբեջանցիների կողմից: Արդեն 1988 թ. մայիսին Շուշիի կուսշրջկոմի նախաձեռնությամբ սկսվեց հայերի բռնագաղթ քաղաքից: Մայիսի 16-ից սկսած՝ երեք օրվա ընթացքում Շուշիի հայերի մեծամասնությունը վտարվում է քաղաքից, իսկ նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը՝ կողոպտվում[2]:

Սեպտեմբերին արյունալի դեպքեր տեղի ունեցան Խոջալու գյուղում, իսկ սեպտեմբերի 18-ին Շուշիի ամբողջ հայ ազգաբնակչությունը վտարվեց քաղաքից:

Ադրբեջանի հայության բռնագաղթի փուլերը

Ընդհանուր առմամբ Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը երկու տարվա ընթացքում հաջորդաբար բռնկվեցին չորս փուլերով: Առաջին փուլը սկսվեց Սումգայիթով, տեղի հայերի ցեղասպանությամբ, որի հետևանքով սկսվեց հայության բռնագաղթը Ադրբեջանից: Երկրորդ փուլը սկսվեց 1988թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Ադրբեջանի գրեթե ամբողջ հայ բնակչությանը և սկսվեց երկրորդ մեծ բռնագաղթը:

Փաստորեն, բռնությունների երկրորդ ալիքը սկսվեց 1988 թ. նոյեմբերին և դեկտեմբերին:

Զանգվածային հարձակումների ենթարկվեց Կիրովաբադի (այժմ Գյանջա), Մինգեչաուրի, Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Վարդաշենի, Շաքիի հայ ազգաբնակչությունը: Առավել ուժեղ հարձակման ենթարկվեց Կիրովաբադի հայությունը: Երկու շաբաթ շարունակ հայկական թաղամասի եկեղեցում հավաքված հայությունը դիմադրություն ցույց տվեց ադրբեջանական ամբոխին: Քաղաք մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, որոնք, նույնպես ենթարկվելով հարձակման, ունեցան սպանվածներ և վիրավորներ: Նոյեմբերի վերջերին, դեկ-

[1] Արշակյան 2004, 19:
[2] Արշակյան 2004, 43:

տեմբերի սկզբներին վերը նշված քաղաքների և հայկական գյուղերի հայ ազգաբնակչությունը հարկադրաբար բռնեց գաղթի ճանապարհը: Տեղահան արվեց Նախիջևանի վերջին հայկական Ազնաբերդ գյուղի բնակչությունը: Բռնագաղթածների մեծ մասը չկարողացավ իր հետ դուրս բերել իր ունեցվածքը, և այն թալանվեց ադրբեջանցիների կողմից[1]:

Այդ ժամանակ կենտրոնը, չցանկանալով ըմբռնել տեղի ունեցած երևույթները, ձևական որոշումներ էր ընդունում՝ բռնագաղթվածներին հետ վերադարձնելու իրենց բնակության նախկին վայրերը: Նույնիսկ երկրի բարձրագույն իշխանության ժողովրդական պատգամավորների համագումարները ի զորու չեղան հիմնախնդրին լուծում տալու: Կենտրոնի բռնած հանդուրժողական դիրքը հայերի ցեղասպանության և բռնագաղթի նկատմամբ հանգեցրեց արյունալի ընդհարումների Թուրքմենիայում, Ֆերգանայում, Նոր Ուզենում և մի շարք այլ վայրերում: Դրանք բոլորը ապացույց էին, որ ազգային հարցը պահանջում է անմիջական և արագ լուծում:

Հայության հանդեպ բռնությունները Ադրբեջանում շարունակվեցին 1989 թ.:

Հուլիս-օգոստոս ամիսներին նորից սկիզբ առավ ադրբեջանահայերի երրորդ մեծ բռնագաղթը: Ադրբեջանում նորից սովորական դարձան հայ ազգաբնակչության ստվար զանգվածներին հալածելու, մինչև ուշագնացության աստիճան ծեծելու, դանակահարելու, խոշտանգելու դեպքերը: Այդ օրերին Կիրովաբադի հայկական թաղամասում հրկիզվեցին հայերին պատկանող հարյուրավոր տներ: Այս դեպքերը մոտեցրին 1990 թ. հունվարյան իրադարձությունները:

Բաքվի հայության ցեղասպանությունը

1990 թ. հունվարի 13-20-ը Բաքվում ժողովրդական ճակատը Ադրբեջանի կառավարող շրջանների հետ ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը Ադրբեջանում հայերի ցեղասպանությունը ավարտին մոտեցնելու ամենավճռական փուլը եղավ: Սկսվեց ադրբեջանահայության բռնագաղթի, արտաքսման չորրորդ և վճռական փուլը: Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները դեն էին նետել ինտերնացիոնալիստների դիմակները, հրահրում և ընթացք էին տալիս արյունահեղություններին: Կազմակերպչական առումով Սումգայիթը զուր չէր անցել: Բաքվի հայության կոտորածը կազմակերպված էր նույն եղանակով, ինչ որ դրան նախորդող ցեղասպանությունը: Եթե առաջին դեպքում 1988 թ. իրավապահ մարմինները չէին միջամտում բարբարոս ամբոխի գործերին, ապա այս դեպքում իրենք անմիջական մասնակցություն էին ցուցաբերում ջարդերին:

Բաքվում հայերի նկատմամբ իրագործված ջարդերի վերաբերյալ գործի քննություն չկատարվեց: Ինչպես Սումգայիթի դեպքում, Մոսկվան չցանկացավ բացահայտել սպանդի ու ջարդի կազմակերպիչներին ու ոգևորողներին: Ադրբեջանում սպանված ջարդարարները հայտարարվեցին «ազգային հերոսներ» և տեղ գտան «Եղբայրական գերեզմանոցում»: ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարևը լռությամբ պաշտպանեց Բաքվում կատարված վանդալիզմը: Ադրբեջանական ազգայնամոլ տարրերը 1990թ. հունվար ամսին սկսեցին նոր բարբարոսություն-

[1] Հայոց ցեղասպանություն, պատճառներ և դասեր 1995, 26:

ներ: Դեռևս 1989 թ. դեկտեմբերի 30-ի միտինգում հնչեցին կոչեր հայերին բնաջնջելու վերաբերյալ, ինչպես նաև Իրանի հետ սահմանը քանդելու և Արաքսի այն ափին բնակվող եղբայրներին միանալու մասին, ինչն արվել է դեռևս դեկտեմբերի 12-ին և ավարտվել դեկտեմբերի վերջին 3 օրերին: Այդ փաստը ավելի ուշ հաստատեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը՝ նշելով, որ. «Ադրբեջանի ծայրահեղական ուժերի գործողությունները ստանում էին ավելի ու ավելի բացահայտ հակապետական, հակասահմանադրական բնույթ: Իրադարձությունները Բաքվում դարձել էին անկառավարելի, Գերագույն խորհուրդը և ԽՄԿԿ-ն կաթվածահար էին, քանդվել էր 200 կմ խորհրդային պետական սահմանը Իրանի հետ, հարձակումներ էին կատարվում տեղական մարմինների վրա: Ես շտապ Բաքու գործուղեցի Եվգենի Պրիմակովին և Անդրեյ Գիրենկոյին, ովքեր առաջարկեցին արտակարգ իրավիճակ հայտարարել ու զորքեր մտցնել: Այժմ էլ համարում եմ, որ դրանով կանխվեց ավելի մեծ արյունահեղությունը»[1]: Դեռևս Բաքվում հայերի ու մյուս ազգությունների ներկայացուցիչների կոտորածը սկսվելուց 4 օր առաջ Հայաստանի Գերագույն խորհուրդը դիմել էր Մ. Գորբաչովին և նրան տեղյակ պահել, որ Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշենում և այլ տեղերում ստեղծվել է արտակարգ իրադրություն: Տեղի են ունենում սպանություններ, հրկիզումներ, շրջափակվում են ճանապարհները, կամուրջները, առևանգվում են պատանդներ: Հայաստանի Գերագույն խորհուրդը Մ. Գորբաչովից խնդրում էր «Անհապաղ միջոցներ ձեռնարկել ապահովելու հայ բնակչության անվտանգությունը, դադարեցնելու բարբարոսական գործողությունները, որոնք կարող են հանգեցնել անուղղելի կործանարար հետևանքների ամբողջ տարածաշրջանում»[2]:

Սումգայիթում և Բաքվում, երկու դեպքում էլ հայերի ջարդի նախապատրաստված լինելը երևում է նրանից, որ բոլոր բնակկառավարչություններին վաղօրոք կարգադրված էր կազմել հայ բնակիչների ցուցակը, արգելել հայերին աշխատանքի գնալ: Եթե Սումգայիթում դա արվեց փետրվարի 28-ից սկսած, ապա Բաքվում դեռևս 1989թ. դեկտեմբերի 25-ից սկսած: Այդ օրը ծայրահեղականները այրեցին Բաքվի հայոց եկեղեցին, նրանց հաջողվեց վերջին հայերին ազատել տալ աշխատանքից: Առավել անհնազանդ կամ «դանդաղաշարժ» ղեկավարների ազգանունները, որոնք մտածված կամ ակամա չէին կատարում այդ կարևորագույն պահանջը, փակցվում էին հատուկ ցուցատախտակներին՝ լեյտենանտ Շմիդտի փողոցում գտնվող ժողովրդական ճակատի պաշտոնական նստավայրի առջև: Ինչպես նաև այն հարյուրավոր հայերի ազգանունները, որոնք դեռ շարունակում էին աշխատել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմում, հանրապետության ՊԱԿ-ի համակարգում գտնվող մի շարք հաստատություններում: Երկու դեպքում էլ հայերին արտաքսելու և բնաջնջելու կոչերն ահագնացան այն բանից հետո, երբ առանձնացվեցին հայերի հասցեները, և ճշտվեց այն ժամանակահատվածը, երբ սկսելու էին ցեղասպանությունը: Կանխամտածված ու ծրագրված հայասպանության համար նախապատրաստել էին բոլոր միջոցները (երկաթե ձողեր, քարակույտեր), ստեղ-

[1] Մելիք-Շահնազարյան 1988, 40:
[2] Московский комсомоле 2006, 2 марта:

ծել էին հանցագործության, հանցավորների ու հանցակիցների քողարկման պայմաններ ու հոգեբանական տրամադրվածության վիճակ, գործելու համար հարմարավետ մթնոլորտ:

1990թ. հունվարի սկզբին ազերիների զինված ջոկատների թիվը հասնում էր մի քանի հազարի: Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահությունը, հանդես գալով հայտարարությամբ, նշում էր, որ Բաքվում կազմակերպվում է նոր Սումգայիթ: Խորհրդային և համաշխարհային հասարակայնությունից պահանջվում էր վճռականորեն դատապարտել ադրբեջանցիների միջնադարյան գազանությունները, որոնք կրկին հրեշավոր ոճիրներ են գործում ընդդեմ մարդկության[1]: Ադրեջանի «Ժողովրդական ազգային ճակատի» պարագլուխ Ա. Փանախովը և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովը, հունվարի 13-ին հանդես գալով հեռուստատեսությամբ, ադրբեջանական ժողովրդին կոչ են անում հարձակում գործել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերի վրա: Վեզիրովը նույնիսկ կոչ էր անում հակահայկական գործողություններն ավարտել մինչև հունվարի 16-ը[2]: Նրանց ելույթներից հետո Բաքվում սկսվեցին հայ ընտանիքների դեմ հարձակումներն ու բարբարոսությունները: Հունվարի 13-ին Բաքվի փողոցներում թափված էին կտտանքների ենթարկված տասնյակ հայերի դիակներ: Այդ օրվանից հալածանքները Բաքվում կազմակերպված ձև ընդունեցին: Քաղաքը պլանաչափ կերպով տուն առ տուն «մաքրվում էր հայերից»: Ընդ որում, ինչպես 2 տարի առաջ Սումգայիթում, անչափահասների և կանանց նկատմամբ բռնաբարություններ ու խոշտանգումներ էին կատարվում: Բաքու տանող ճանապարհները շրջափակված էին: Ով կենդանի էր մնում, ուղարկում էին նավահանգիստ, որտեղ վերջնականապես կողոպտվում էր և նավով էվակուացվում հիմնականում դեպի Թուրքմենիա՝ Կրասնովոդսկ: Բաքվի հարյուրավոր փախստականներ իրենց տեղեկություններում հաստատում են, որ «ժողովրդական ճակատի» կողմից կազմակերպված ու ղեկավարվող հետապնդումներն ու ջարդերը ընթանում էին ըստ մի անփոփոխ սխեմայի, որը մշակել էին կազմակերպիչները[3]: 10-20 ոճրագործներ ներխուժում էին մի բնակարան և սկսում տան տերերին տեռորի ընթարկել, ծեծել ու տանջել, այնուհետև երևում էին «ժողովրդական ճակատի» ներկայացուցիչները, որոնք ահաբեկված հայերին առաջարկում էին անհապաղ գնալ նավահանգիստ: Նրանց թույլատրվում էր իրենց հետ ծանրոց վերցնել, սակայն խլվում էին ամբողջ կանխիկ դրամը, խնայողական գրքույկները և արժեքավոր իրերը: Նավահանգստում տեղակայված էր «ժողովրդական ճակատի» մի պահակակետ: Փախստականներն այստեղ դարձյալ խուզարկվում էին, երբեմն նորից ենթարկվում ծեծի: Այդ օրերին Բաքվի ոստիկանության հավաքական դիմանկարի բնորոշ գիծը ներկայացրեց ԱԺՃ-ի առաջնորդներից մեկը՝ Է. Մամեդովը, Մոսկվայի մամլո ասուլիսի ժամանակ: «Ես անձամբ վկա էի, երբ երկաթուղու կայարանից ոչ հեռու սպանեցին 2 հայի: Հավաքվել էր ամբոխը, նրանց վրա լցրեցին բենզին և այրեցին, իսկ 200 մ հեռու գտնվում էր

[1] Աբրահամյան 2007, 199:
[2] Սովետական Ղարաբաղ 1990, 16 հունվարի:
[3] Սովետական Ղարաբաղ 1990, 18 հունվարի:

Նամինիսյան շրջանի ոստիկանական բաժանմունքը, և այնտեղ կային ներքին զորքերի մոտ 400-500 զինվոր, որոնք մեքենայով 20 մետրի վրա անցան այդ ածխացած դիակների մոտով, և ոչ ոք փորձ չարեց ցրել ամբոխը»[1]: Այդ բոլոր մանրամասն պլանավորված ստոր գործողություններն առավել արդյունավետ անցկացնելու նպատակով կազմավորվել էին նաև իրավապահ մարմինների, «շտապ օգնության», բնակկենցաղային ծառայության հանցագործ խմբեր, որոնք գործում էին միասնաբար: Մահամերձ ծեծվածը համարվում էր կենցաղային վնասվածք ստացած, փշրված ձեռքերով ու ոտքերով, ջարդված կողերով արյունլվիկ դեմքով մարդը մահանում էր սիրտանոթային անբավարարվածությունից՝ ըստ տրված մահվան վկայականի[2]: Սպանդ, կոտորածներ և ջարդեր… պատշգամբներից նետվող մարդիկ և մոխրացած դիակներ կամուրջներին: Ահա սա է 1990թ. հունվարյան ջարդերի օրերի Բաքուն: Բաքվի հայկական ջարդերի պատկերը առավել ակնհայտ երևում է այդ օրերի պարբերական մամուլի էջերից: «Զանգվածային անկարգությունների գծով հարուցված քրեական գործերի կարճ ու կտրուկ որոշումներում կարդում ենք. «1990թ. հունվարի 13-ին, ժամը 17:00-ից հետո Լենինի անվան հրապարակի միտինգից դուրս եկած մոտ 50 հազար մարդ, բաժանվելով խմբերի, կատարեցին ջարդեր, ավերածություններ, հրկիզումներ, բռնություններ և սպանություններ: Քանի որ անանուն ամբոխն է կոտորել և դիակապտությամբ զբաղվել, բռնաբարել և սպանել ծերերին, եզրակացություններ անելը դեռ շուտ է, չնայած արդեն այսօր աչքի է զարնում մի հանգամանք, որ բռնվածների մեջ չկա ոչ մի բաքվեցի, նրանք բոլորն էլ Հայաստանի, ԼՂԻՄ-ի կամ Նախիջևանի շրջաններից են»[3]: Հունվարի 15-ին հայերի ջարդերը և հարձակումները նրանց վրա շարունակվել են, իսկ ամբողջությամբ վերցված վերջին երեք օրերում նախնական տվյալներով զոհվել են 43 հայեր: Սակայն այդ թիվը չի կարելի վերջնական համարել, որովհետև Բաքվում դեռևս չեն ստուգվել բոլոր այն բնակարանները, որտեղ եղել են ջարդարարները: Հունվարի 16-ին Բաքվում բացահայտվել են հայերի 64 կողոպտված բնակարաններ: Հանրապետության մայրաքաղաքի Լենինյան շրջանում հայտնաբերվել են 4 ածխացած դիակներ, որոնք առայժմ ճանաչված չեն: Անցած օրվա ընթացքում արձակվել են 30 հայ պատանդներ: Հունվարի 17-ին Բաքվում կատարվել են 45 բնակելի տների կողոպուտ ու հրկիզում: Այդ հունվարյան օրերին ո՞վ կարող էր անտարբեր նայել, օրինակ, երբ Բաքվում հայկական ջարդերից գազազած ամբոխը բառիս բուն իմաստով մարդուն կտոր-կտոր է արել և նրա մնացորդները նետել աղբարկղ[4]: Հունվարի 15-ին, երբ շարունակվում էին հայկական ջարդերը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը փոխանակ ընդունելու արտակարգ դրություն հայտարարելու որոշում, ընդունում է «ԼՂԻՄ-ում և մի քանի այլ շրջաններում արտակարգ դրություն հայտարարելու որոշում»: Արտակարգ դրություն է մտցվում ԼՂԻՄ-ում, նրա սահմանակից շրջաններում: Մինչդեռ Բաքվում արտակարգ դրություն է հայտարարվում միայն հունվարի 18-ին, երբ հայկական ջարդերն ըստ էության ավարտվել, և մայ-

[1] Մոսեսովա, Հովնանյան 1992, 18-20:
[2] Մոսեսովա, Հովնանյան 1992:
[3] Հակոբյան 2008, 93-96:
[4] Մոսեսովա, Հովնանյան 1992, 18-20:

ռաքաղաքում հայեր չէին մնացել: Մոսկվան, հայկական ջարդերն օգտագործելով, որպես պատրվակ՝ զորքեր է մտցնում Բաքու՝ ջախջախելու իշխանության ձգտող ժողովրդական ճակատը:

Մեկ շաբաթ շարունակ երկրի պաշտոնական լրատվական միջոցները սկզբում թաքցնում, ապա կցկտուր տեղեկություններ էին հաղորդում Բաքվում հայերի ցեղասպանության մասին: Եթե Գորբաչովի հայտարարության համաձայն բանակը Սումգայիթ մտավ «երեք ժամ ուշացումով», տվյալ դեպքում այն Բաքու մտավ մեկ շաբաթ ուշացումով: Հնարավոր է, որ բանակը նույնիսկ Բաքու չմտներ, եթե արյան ծարավից մոլեգնած ցեղասպան թուրքը չհարձակվեր քաղաքի ռուս ազգաբնակչության, զինվորական զորամասերի վրա, և եթե անմիջական վտանգ չսպառնար խորհրդային կարգերին Ադրբեջանում:

Այս անգամ նույնպես պաշտոնական լրատվական միջոցները փորձեցին կոծկել հայության սպանդը և հայտարարեցին, որ զոհվել են 100-ից ավելի հայեր:

Խորհրդային զորքերը դիվիզիայի հրամանատար Ալեքսանդր Լեբեդի գլխավորությամբ Բաքու են մտնում հունվարի 20-ին: Սպանվում են 130 ցուցարարներ և գրոհայիններ:

Միայն հայ ազգությանը պատկանելու համար Բաքվում սպանվեցին 200-ից ավելի հայեր[1]: Հունվարյան ջարդի օրերին Բաքվում զոհվել է որոշ տվյալներով 150-300, իսկ մեկ այլ աղբյուրի համաձայն 1000 մարդ[2]: Այս տվյալները մոտավոր են: Բաքվում հետապնդումների ժամանակ սպանվածների հստակ թիվն այդպես էլ հայտնի չեղավ:

Ամենայն հավանականությամբ, ինչպես Սումգայիթում, այնպես էլ Բաքվում զոհ գնացած հայերի թվաքանակը հնարավոր չէ պարզել:

Կոտորածն ուղեկցվում էր հրկիզումներով և թալանով: Բաքվի հունվարյան կոտորածից հետո «ինտերնացիոնալ» քաղաքը ազատվեց 200 հազարից ավելի հայերից, որոնք ապաստան գտան Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում: Բաքվի արյունալի դեպքերից հետո Ադրբեջանի տարածքում հայ չմնաց:

ԽՍՀՄ տարբեր պաշտոնական ատյաններում ամիսներ շարունակ քննարկվում էր ոչ թե հայերի ցեղասպանությունը Բաքվում, այլ խորհրդային զորքի մուտքը քաղաք և ընդհարումները ադրբեջանցիների հետ:

1988-1990 թթ. հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում մեկ անգամ ևս ապացուցեց, որ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը խոր արմատներ էր գցել հանրապետությունում: Սկսած 1960-ական թվականներից մինչև վերջին հայտնի իրադարձությունները՝ Ադրբեջանի գիտնականները, նենգափոխելով հայոց և հարևան ժողովուրդների պատմությունը, յուրացնելով նրանց միջնադարյան մշակութային գործիչներին, երիտասարդությանը դաստիարակում էին պանթուրքիզմի ոգով, հայկական և հարևան ժողովուրդների տարածքները համարում էին ադրբեջանական: Այսպիսով՝ գաղափարապես նախապատրաստվում էր «Մեծ Ադրբեջանի» և Թուրանի ստեղծումը: Պատահական չէ, որ Ադրբեջանը բարոյական, ֆինանսական, ռազմական օգնություն է ստանում Թուրքիայից:

---

[1] Аннексияи и Депортация 1988, 11:

[2] Առավոտ 2010, 14 հունվարի:

Թուրքական քաղաքական գործիչները ամեն կերպ օժանդակում են Ադրբեջանի կայուցմանը, որպես թուրքական համադաշնության մի օղակ: Ադրբեջանը, ինչպես 70 տարի առաջ, կարևոր տեղ է զբաղեցնում «Մեծ Թուրանի» ճանապարհին: 1988 թ. թուրքական Միլլիեթ թերթը գրում էր. «Մեզ համար կարևորը թուրքական դրոշների հայտնվելն էր վերջին ադրբեջանական հանրահավաքներում»[1]: Մեկ այլ թերթ նշում էր, որ ադրբեջանցիները թուրքեր են, իսկ Ադրբեջանում ձեռքից ձեռք է անցնում Մեծ Թուրքիայի քարտեզը[2]: Պանթուրքիզմը ավելի վառ արտահայտություն գտավ Ադրբեջանում ազգային ճակատ ստեղծելուց հետո:

1988-1990թթ. Ադրբեջանում իրականացված ցեղասպանությունների մեջ իր մեղքի բաժինն ունի ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, որը չկանխեց և գրեթե ոչ մի միջոց ձեռք չառավ հայությանը փրկելու: Զորքերը միշտ հայտնվում էին այն պահին, երբ մոլեռանդ ամբոխը ավարտել էր իր գործը: Անհեթեթ հայտարարությունները չէին կարող չծնել նոր հանցագործություններ, դեռ ավելին, սկսած 1991 թ. ապրիլի 30-ից երեք ամիս շարունակ Խորհրդային պետությունն ինքը Ադրբեջանական Օմոնի հատուկ ստորաբաժանումների հետ, զինված ուժերի միջոցով իրականացրեց հայության բռնագաղթը Գետաշենի շրջանում, Շահումյանում ու Արցախի մյուս շրջաններում: 24 հայկական գյուղեր հայաթափվեցին, զոհվեցին շատ մարդիկ: Դա արդեն ագրեսիա էր խորհրդային պետության կողմից:

Ներկայիս հայ-ադրբեջանական պատմության իրողությունը շատ հեռու է թվում Ադրբեջանի կողմից լայն տարածում գտած պետական մոտեցումներից: Պետության և ԶԼՄ-ների կողմից հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ այն ընկալումն է ստեղծվել, թե իբր հայերը դաժան հանցագործներ են և զավթիչներ, իսկ ադրբեջանցիները՝ անմեղ զոհեր:

Եզրակացություններ

Այսպիսով, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները, անհրաժեշտ ենք համարում տալ կատարված դեպքերի իրավաքաղաքական գնահատականը:

Իր ցեղային բնազդով և քոչվորի հոգեբանությամբ Ադրբեջանում ապրող ադրբեջանցու համար 1988-1990 թթ. հայերի ցեղասպանությունը հանդիսանում էր Թուրքիայում իրագործված արևմտահայության ցեղասպանության շարունակությունը:

Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում կրել է շարունակական բնույթ և սպիտակ գենոցիդի հետ մեկտեղ շարունակվել է մեկ դարից ավելի:

Ցեղասպանության կազմակերպիչ են հանդիսացել Ադրբեջանի մուսավաթական, ապա նաև կոմունիստական և անկախ Ադրբեջանի հանրապետության իշխանությունները: Հայության ցեղասպանությունը Ադրբեջանում իրականացվեց պանթուրքիզմի կարգախոսների ներքո:

Այդ հրեշավոր իրադարձությունները ազդանշան էին միջազգային հանրությանը, որ Այսրկովկասում երբևէ չի կարող հաստատվել արդար և կայուն խաղաղություն, քանի դեռ պատասխանատվության չեն ենթարկվել 1988-1990 թթ. Ադր-

[1] Коммунист 1906, 6 января:
[2] Коммунист 1906, 6 января:

բեջանում և Արցախում հայերի ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները: Այդ մասին պետք է իմանան բոլոր նրանք, ովքեր այսօր հովանավորում են Ադրբեջանին Արցախի հետ կապված հարցերում, գրգռում են նրա ղեկավարների ախորժակը և խրախուսում՝ Այսրկովկասյան տարածաշրջանում ցեղասպանության նոր գործողություններ կազմակերպելու:

Միաժամանակ Արցախի կայացման զուգահեռ՝ ընթանում են միջազգային կազմակերպությունների և գերտերությունների մասնակցությամբ բանակցություններ, որոնց մասնակցում է նաև Ադրբեջանը. այն դեպքում, եթե Ադրբեջանը ցեղասպան պետություն ճանաչվի՝ միջազգային օրենսդրությամբ ընդհանրապես կզրկվի բանակցություններին մասնակցելու իրավունքից, և օրակարգից դուրս կգան նրա անօրինական նկրտումները Արցախի նկատմամբ:

Այսօր խիստ կարևոր է Ադրբեջանին պատասխանատվության կանչելը և միջազգային հանրության պահանջով նրանից նախկին ադրբեջանահայությանը հասցված նյութական ու բարոյական վնասի լիարժեք փոխհատուցում պահանջելը: Սա կարևոր հիմնախնդիր է: Դժբախտաբար մինչև օրս Ադրբեջանում հայերի նկատմամբ ցեղասպանությունը չի հաջողվել ներկայացնել համարժեք կերպով: Այսօր առկա են բազմաթիվ վավերագրեր, նյութեր, հրապարակված աշխատություններ, որոնք կարող են ապացուցել ցեղասպանության փաստերը: Դրա հիման վրա Ադրբեջանը պարտավոր է փոխհատուցել բռնագաղթված հայերին, քանի որ նրանք այնտեղ թողել են մեծ ծավալի ունեցվածք, որը չի կարելի համեմատել Հայաստանից մեկնած ադրբեջանցիների ունեցվածքի հետ: Ընդ որում՝ վերջիններս ստացել են համապատասխան փոխհատուցում և չեն ենթարկվել բռնի գործողությունների:

Փաստորեն հայերի հանդեպ վայրագությունները, որոնք կազմակերպվում էին Ադրբեջանի իշխանությունների կողմից XX դարի ընթացքում, կրկին ընդգծում են Արցախի ժողովրդի ինքնորոշման համար պայքարի իրավացիությունը, ժողովուրդ, որը պայքարի ելավ իր վաղնջական իրավունքների և ազատության պաշտպանության համար և հասավ անկախ հանրապետության ստեղծմանը:

Ամփոփում

Հայերի ցեղասպանությունն Ադրբեջանում 1988–1990 թթ.

Էդիկ Մինասյան

Հարուստ փաստացի նյութի հիման վրա հոդվածում ներկայացվում են 1988-1990թթ. Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի (Գյանջա), Շուշիի և այլ վայրերի կոտորածների վերլուծությունը և դրանց պատճառները: Մատնանշվում է, որ դրանք Ադրբեջանի ղեկավար շրջանների կողմից հայերի նկատմամբ կիրառվող ազգայնական քաղաքականության հետևանքն են: Հեղինակը եզրակացնում է, որ Սումգայիթի, Բաքվի և այլ վայրերի ադրբեջանահայության կոտորածները փաստորեն XX դարի սկզբին Թուրքիայի կողմից իրականացված արևմտահայերի ցեղասպանության շարունակությունն են, և որ նման քաղաքականությունը Ադրբեջանը հաջորդականորեն շարունակվում է իրականացնել նաև մեր

օրերում: Անհրաժեշտ է, որ միջազգային հանրությունը դատապարտի Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունը և պատասխանության կանչի նրան:

Հիմնաբառեր. *Սումգայիթ, ոճրագործություն, Ադրբեջան, վայրագություն, զոհ, վերակառուցում, անպատժելիություն, Ազգային խորհուրդ, բարբարոսություններ, Գերագույն խորհուրդ, օրենսդրություն, գազազած ամբոխ:*

Резюме

ГЕНОЦИД АРМЯН В АЗЕРБАЙДЖАНЕ 1988–1990 ГГ.

Эдик Минасян

На основе фактического материала в статье представлены хронология погромов армян в Сумгаите, Баку, Шуши и других местах в 1988 - 1990 гг. и их причины. Показано, что они явились следствием националистической политики правящих кругов Азербайджана по отношению к армянам. Автор приходит к заключению, что сумгаитские и бакинские погромы не что иное, как продолжение геноцида восточных армян, организованного в Турции в начале XX века, и что в Азербайджане подобная политика являлась преемственной. Необходимо, чтобы международная общественность осудила геноцидную политику Азербайджана и призвала его к ответу.

Ключевые слова: *Сумгаит, преступность, Азербайджан, зверство, жертва, реконструкция, безнаказанность, Национальный совет, варварство, Верховный Совет, законодательство, Национальный совет*

Abstract

THE ARMENIAN GENOCIDE IN AZERBAIJAN IN 1988–1990

Edik Minasyan

Based on rich factual material, the article presents the analysis of the massacres of Sumgait and Baku, Kirovabad (Ganja), Shushi and other places in 1988-1990 and their causes. It is pointed out that it is the result of the nationalistic policy of the Azerbaijani leadership towards the Armenians.

The author concludes that the massacres of Azerbaijani Armenians in Sumgait, Baku and other places are in fact a continuation of the genocide of Western Armenians committed by Turkey at the beginning of XX century, and that nowadays such a policy is still pursued by Azerbaijan. It is necessary for the international community to condemn Azerbaijan's genocidal policy and call it to account.

Keywords: *Sumgait, crime, Azerbaijan, atrocity, victim, reconstruction, impunity, National Council, barbarism, Supreme Council, legislation, National Council, furious crowd.*